

ԺԷ.

ԳՈՒԶԿՈՒՆՃՈՒՔ

Վոսփորի մէկ հոսանքը կ'ապահանջէ, որ Գուգկունճուքի նաւամատոյցին մերձենալու համար՝ նաւավարն իւր նաւակն միշտ դէպի Պէյլերպէյ ուղղէ եւ դէպի հոն թի քաշէ. վասնզի եթէ դէպի Գուգկունճուք ուղղուի՝ Իսկիւտարի առջեւ կը գտնէ ինքզինք: Գուգկունճուքին միշտ այս ճանքով երթեւեկելուն համար սովորութիւն ըրած է իրեն՝ եկեղեցի երթալու համար դէպի Պէյլերպէյի նաւամատոյցին զբօսարանն ուղղել իւր գնացքը, վասն զի եթէ դէպի եկեղեցին առնէ իւր քայլերն՝ ինքզինքը գինետուններու մէջ կ'գտնէ: Ցամաքն ալ ունի իւր հոսանքները:

Այս թաղն թէպէտեւ պաշտօնապէս Իճատիէյի հետ միացած է, բայց ոչ պաշտօնապէս չէ միացած եւ ոչ մէկ թաղին հետ:

Օրինեալ է Աստուած. հոս բնաւ կոիւ չ'պատահիր թաղին վարժարանին վրայ...

–Փա՛ռք քեզ Աստուած. վերջապէս տեսանք թաղ մը, ուր կոիւ չ'ըլլար եղեր վարժարանին վրայ: Կեցցէ՛ Գուգկունճուքին... Գուգկունճուքիին օղի մը տար ինձմէ...

Այո՛, Գուգկունճուքին մէջ բնաւ կոիւ չ'են յարուցաներ թաղին վարժարանին վրայ. եւ ասոր պատճառն ալ կրնաք գուշակել, եթէ ըսեմ ձեզ, որ Գուգկունճուքի մէջ ազգային վարժարան չկայ...

–Հիմայ հասկցուեցաւ, որ թաղին վարժարաններն են եղել կոռույ պատճառները:

Արդարեւ կայ պզտիկ շէնք մը, ուր պզտիկ տղաներ կ'երթան քնանալու համար: Թաղեցիկն անգամ մը սրդոդած ըլլալով վարժարանին դէմ՝ ուխտ ըրած է լումայ մը չտալ անոր համար, եւ հիմայ ուխտադրուծ չսեպուելու համար՝ ստիպուած է քսակին բերանը չ'բանալ իւր վարժարանին համար:

Մինչեւ այսօր հոս թաղային կոիւ ալ տեսնուած չէ, եւ ասոր ալ պատճառն սա է, թէ այս թաղին մէջ...

–Թաղ չկայ, այնպէս չէ՞:

Այս թաղին մէջ եթէ մէկը սխալի եւ սեւին ճերմակ ըսէ՝ իւր դէմը չգտներ ուրիշ մէկն՝ որ ելնէ ըսէ. ո՛չ, այդ սեւ է եւ ոչ ճերմակ: Ահա ասանկով վիճաբանութիւն բնաւ չ'ըլլար, գլուխներն առաջուան պէս անփոփոխ